ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

01.08.2023 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/114 գնման պայմանագրի

ք. Երևան

«01» « 09 » 2023թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ.Տիգրանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 01.08.2023 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/114 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը և **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության աշխատակազմի** կողմից ներկայացված 10.08.2023 թվականի N Ն/41016-23 գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված **Նոր Դալմա ջրատարի սկզբնամասի մինչև նոր կառուցված ջրատարը կառուցման աշխատանքների** կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 70848000 (յոթանասուն միլիոն ութ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն՝ համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված են 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Ք.Երևան, Վերին Անտառային 136/1
ՀՀ ֆինանսների նախարարության	«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 2140006237250100
ՀՀ 900012000585	ՀՎՀՀ 02847373
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան ----------	Գ.Տիգրանյան----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
01.08.2023 թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/114 գնման պայմանագրի
«01» «09» 2023թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231132/502	Նոր Դալմա ջրատարի սկզբնամասի մինչև նոր կառուցված ջրատարը կառուցման աշխատանքներ	...	...	...	...	...	...	...	...	60000000	70848000	70848000	70848000	70848000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900012000585
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ
Ք.Երևան, Վերին Անտառային 136/1
«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ
Հ/Հ 2140006237250100
ՀՎՀՀ 02847373

Գ.Տիգրանյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

acba

29 օգոստոսի 2023թ.
ք. Երևան

Թիվ 055-877

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 22 55 40 42095/19

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/114» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 9.460.000 (ինը միլիոն չորս հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 30/11/2024թ.-ին հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 10 հունիսի 2025թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/114» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Սայաթ-Նովա» մասնաճյուղի կառավարիչ Է. Հարությունյան

Կատարող
Դավիթ Բարդության
Հեռ. 010 31-88-88 (ներքին 7091)

acba

29 օգոստոսի 2023թ.
ք. Երևան

Թիվ 055-875

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 22 55 40 42095/17

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/114» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՐԿԱԴԻԱ ՇԻՆ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/114» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 28.379.000 (քսանութ միլիոն երեք հարյուր յոթանասունինը հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 30/11/2023թ.-ին հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 10 հունիսի 2024թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-23/114» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա

ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Սայաթ-Նովա» մասնաճյուղի կառավարիչ Հ. Հարությունյան

Կատարող՝
Դավիթ Բարդության
Հեռ. 010 31-88-88 (ներքին 7091)